ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«17» սեպտեմբերի 2026 թվականի N 930-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Վիգեն Ալոյանի կողմից ինքնակամ կառուցված 25.5 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Չափշին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023JBUL7N ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 29.9 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Օղակային փողոց թիվ 36/4*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Վիգեն Ալոյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 17
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» սեպտեմբերի 2026 թվականի N 929-Ա

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ԷԴՎԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱՐԶԱԿԱՆ ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնք, գյուղ **Արզական Ամառանոցային թաղամաս 1-ին փողոց 1-ին նրբանցք թիվ 15** հասցեի 0.058 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա 1980 թվականին ինքնակամ կառուցված 82.8 քմ արտաքին մակերեսով շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը: Հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքում Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Չարենցավան համայնք, գյուղ Արզական Ամառանոցային թաղամաս 1-ին փողոց 1-ին նրբանցք թիվ 15 հասցեի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Էդվարդ Պետրոսյանին պատկանող 0.058 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 1980 թվականին ինքնակամ կառուցվել է 82.8 քմ մակերեսով շինություններ՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, գյուղ Արզական Ամառանոցային թաղամաս 1-ին փողոց 1-ին նրբանցք թիվ 15 հասցեի 0.058 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա 1980 թվականին ինքնակամ կառուցված 82.8 քմ մակերեսով շինությունները համարել օրինական՝ համաձայն «Գեոգլոբալ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի:
2. Սույն որոշումնուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 16
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» սեպտեմբերի 2026 թվականի N 928-Ա

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԿԱՐԵՆԻՍ Վ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 2/3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Ա. Մաթևոսյանի 03.09. 2026 թ. թիվ 4214/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ալեքսանդր Մաթևոսյանի /ծնվ. 20.10.1959թ./ ժառանգության իրավունքով պատկանող 0.1000 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը և ճանաչել նրա սեփականության իրավունքը Չարենցավան համայնք, գ. Կարենիս վարչական տարածքում գտնվող 07-037-0001-0010, 0003 ծածկագրով 0.1000 հա մակերեսով հողամասի և 1985 թվականին կառուցված 99.8 քմ մակերեսով շինությունների նկատմամբ՝ համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026XCUHCQ ծածկագրի, նկատի ունենալով, որ հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահանված հողամասերի ցանկում:
2. Առաջացած միավորը հասցեավորել **Չարենցավան համայնք գ. Կարենիս Վ. Մնացականյան փողոց 1-ին նրբանցք թիվ 2/3:**
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.սեպտեմբերի 16
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«16» սեպտեմբերի 2026 թվականի N 927-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳՆԵԼ ՍԱՐԻԲԵԿԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 2-րդ մասով, 59-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի 2026 թվականի սեպտեմբերի 15-ի վարչական վարույթի լսումների թիվ 19 արձանագրությունը, **որոշում եմ.**

1. Քաղաքացի **Գնել Սարիբեկի Խուրշուդյանի** նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել և լսումների օր նշանակել 2026 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը 12:00-ին:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Գնել Սարիբեկի Խուրշուդյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գնել Սարիբեկի Խուրշուդյանին որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 16
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» սեպտեմբերի 2026 թվականի N 926-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 2-րդ մասով, 59-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի 2026 թվականի սեպտեմբերի 11-ի վարչական վարույթի լսումների թիվ 18 արձանագրությունը, **որոշում եմ.**

1. Քաղաքացի **Զեմֆիրա Բալասանյանի** նկատմամբ 2026 թվականի սեպտեմբերի 02-ին հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել և լսումների օր նշանակել 2026 թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 12:00-ին:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Զեմֆիրա Բալասանյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զեմֆիրա Բալասանյանին որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» սեպտեմբերի 2026 թվականի N 925-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Արմենակ Միքայելյանի կողմից ինքնակամ կառուցված 25.11 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Պիոամիդա» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023J8W4RC ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 25.1 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Ս. Շահումյան փողոց թիվ 53/41*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Արմենակ Միքայելյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» սեպտեմբերի 2026 թվականի N 924-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Վրեժ Բավեյանի կողմից ինքնակամ կառուցված 30.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Չափիշին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023AFNWV5 ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 30.6 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան 2-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 3/1*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Վրեժ Բավեյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» սեպտեմբերի 2026 թվականի N 923-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Ավետիք Պետրոսյանի կողմից ինքնակամ կառուցված 24.1 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Գեոկադ 55» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023LVEMVQ ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 24.1 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան 8-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 2/12*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Ավետիք Պետրոսյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» սեպտեմբերի 2026 թվականի N 922-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Ադամյան	Վալերիկ	30000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբեր 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» սեպտեմբերի 2026 թվականի N 921-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ռ. Հագեյանի 25.08.2026 թվականի թիվ 4064/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Ռուբիկ և Ռիտա Հագեյաններին պատկանող ք. Չարենցավան 4-րդ թաղամաս, 1-ին շենք, թիվ 49/50 հասցեի բնակարանը բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ք. Չարենցավան 4-րդ թաղամաս, 1-ին շենք, թիվ 49 (մակերեսը՝ 52.84 քմ, առանձնացվող շինություն-1) և ք. Չարենցավան 4-րդ թաղամաս, 1-ին շենք, թիվ 50 /մակերեսը՝ 55.90 քմ, առանձնացվող շինություն-2/ միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գոռ Սահակյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հատակագծի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» սեպտեմբերի 2026 թվականի N 920-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 9/9 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Վարուժան Բաղդասարյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 21032025-07-0138 վկայական) ***ք. Չարենցավան Հ. Թումանյան փողոց 1-ին նրբանցք թիվ 9/9*** հասցեում գտնվող 28.71 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 28.7 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Վարուժան Բաղդասարյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Վարուժան Բաղդասարյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 9200135101559 հաշվեհամարին՝ 57000 (հիսունյոթ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 128000 (մեկ հարյուր քսանութ հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Վարուժան Բաղդասարյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Վարուժան Բաղդասարյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» սեպտեմբերի 2026 թվականի N 919-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնով, և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով «Գեոլենդ» ՍՊԸ-ի կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման ու սպասարկման համար հողամասի մակերեսների հատակագիծը՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել Մելենիա Հայկի Գալստյանի /ծնվ՝ 12՝01՝1949թ՝/ սեփականության իրավունքը Չարենցավան համայնք, գյուղ Արզական, 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 26 հասցեի 07-015-0113-0049 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 665.8 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և դրա վրա մինչև 2001 թվականի մայիսի 15–ը կառուցված 39՝71 քմ մակերեսով այգետնակի նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են «Գեոլենդ» ՍՊԸ-ի կողմից չափագրված և Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով և շինությունների բնութագրով:
3. Մելենիա Գալստյանին ժառանգության իրավունքով պատկանող 07-015-0113-0049 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ «Չարենցավան համայնք, գյուղ Արզական, 1-ին փողոց, 1-ին փակուղի թիվ 26»:
4. Առաջարկել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին գրանցել քաղաքացի Մելենիա Գալստյանի սեփականության իրավունքն ամրագրված հողամասի և այգետնակի նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.սեպտեմբերի 14
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» սեպտեմբերի 2026 թվականի N 918-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Հայրապետյան Աբրահամ 30000 դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբեր 14
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» սեպտեմբերի 2026 թվականի N 917-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 13/23 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Սեյրան Ղարաբաղցյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 08092026-07-0068 վկայական) ***ք. Չարենցավան Հ. Թումանյան փողոց 1-ին նրբանցք թիվ 13/23*** հասցեում գտնվող 33.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 33.6 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Սեյրան Ղարաբաղցյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Սեյրան Ղարաբաղցյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 9200135101559 հաշվեհամարին՝ 67000 (վաթսունյոթ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Սեյրան Ղարաբաղցյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Սեյրան Ղարաբաղցյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 14
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«14» սեպտեմբերի 2026 թվականի N 916-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զաբել Մարտիրոսյան Միշայի անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի Քոչարի փողոց թիվ 56/1 շինության տարածքում գտնվող 26քմ մակերեսով հանրային սննդի օբյեկտում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N4442/12 առ 2026 սեպտեմբերի 14-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 260914246614030 անդորրագրի դիմումատուն 2026 թվականի չորրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 95-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի1-ին մասի 4-րդ կետով՝ որոշում եմ.

1. ***Զաբել Մարտիրոսյան Միշայի*** անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի Քոչարի փողոց թիվ 56/1 շինության տարածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում, որականացնելու հանրային սննդի կազմակերպում և իրացում (Թույլտվություն N389):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնիպետ Վ. Բարսամյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 14
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«11» սեպտեմբերի 2026 թվականի N 915-Ա

ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 8-րդ թաղամասի 17-րդ շենքի 15 բնակարանի բնակիչ Զորայր Սարգսյանի 2026 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 4387/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ պատգամավորների Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1995 թվականի հոկտեմբերի 26-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 12 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 8-րդ թաղամաս 17-րդ շենք 15 բնակարան) **«Սարգսյան Վասիս Արմենակի»** բառերը փոխարինել համապատասխան **«Սարգսյան Վասիլ Արմենակի»** բառերով, **«Սարգսյան Զորայր Վահագի»** բառերը փոխարինել համապատասխան **«Սարգսյան Զորայր Վասիլի»** բառերով, իսկ «**Սարգսյան Զոհրաբ Վահագի**» բառերը փոխարինել համապատասխան **«Սարգսյան Զոհրաբ Վասիլի»** բառերով :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 11
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«11» սեպտեմբերի 2026 թվականի N 914-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 08-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 30-րդ շենքի 11 բնակարանի բնակիչ Արթուր Միրզոյանի 2026 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 4359/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավանի քաղաքապետի 1998 թվականի մայիսի 08-ի «Չարենցավան քաղաքի մի շարք հիմնարկ-ձեռնարկությունների հանրակացարանների սեփականաշնորհման թույլտվություն տալու մասին» թիվ 12 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 6-րդ թաղամաս 30-րդ շենք 11 բնակարան) **«Միրզոյան Բորիս»** բառերը փոխարինել համապատասխան **«Միրզոյան Բարիս»** բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 11
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«11» սեպտեմբերի 2026 թվականի N 913-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Ռազմիկ Թումասյանի կողմից ինքնակամ կառուցված 9.2 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023LLEWTF ծածկագրի:
2. Տնտեսական շինության սպասարկման նպատակով հատկացնել 55.0 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Ե. Չարենցի փողոց թիվ 15/1*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Ռազմիկ Թումասյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 11
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» սեպտեմբեր 2026 թվականի N 912-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Միրզոյան	Վռամ	30000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբեր 11
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«11» սեպտեմբերի 2026 թվականի N 911-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՉԳԵՆ ԵՂԻՇԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 30-րդ շենքի թիվ 22 բնակարանի բնակիչ Վազգեն Եղիշի Մելքոնյանը 2026 թվականի օգոստոսի 18-ին /մուտք՝ 18.08.2026 թ., մտից համար՝ 3966/04/՝ դիմնում է ներկայացրել Չարենցավան համայնքի ղեկավարին՝ թիվ 07-008-0279-0076 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականության իրավունքի ճանաչման և ավել օգտագործվող մասը ուղղակի վաճառքի կարգով օտարման մասին:

Փաստի առթիվ 26.08.2026 թվականին Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է թիվ 861-Ա որոշումը՝ «Վարչական վարույթ հարուցելու և լսումների օր նշանակելու մասին»:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի սեպտեմբերի 08-ին, ժամը՝ 11:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Վազգեն Եղիշի Մելքոնյանը: Վարչական վարույթի լսումներին Վազգեն Եղիշի Մելքոնյանը ներկայացրել է բանավոր միջնորդություն՝ խնդրելով թույլատրել, որպեսզի իր փոխարեն լսումներին մասնակցեն և իր շահերը ներկայացնեն որդին՝ Արա Վազգենի Մելքոնյանը, և Քրիստինե Ալբերտի Բալյանցը: Ներկայացված միջնորդությունը բավարարվել է: Վարույթի մասնակիցները ներկայացրել են, որ 26.02.1993 թ.-ի թիվ 3 որոշմամբ Չարենցավանի պատգամավորների քաղաքային խորհրդի գործկոմի կողմից Վազգեն Եղիշի Մելքոնյանին Ալափարս բնակավայրում՝ անհատական բնակարանային շինարարության նպատակով, հատկացվել է 400 քմ մակերեսով հողամաս՝ բնակելի կառուցապատման իրավունքով: Հողամասի հատկացման պահից ի վեր՝ ավելի քան 30 /երեսուն/ տարի, հողամասը Վազգեն Եղիշի Մելքոնյանի և նրա ընտանիքի անդամների կողմից փաստացի տիրապետվել և օգտագործվել է բացահայտ, անընդմեջ ու բարեխղճորեն՝ առանց հարևանների կամ այլ անձանց հետ սահմանային կամ տիրապետման վերաբերյալ վեճերի: Վերջիններս հավելեցին, որ նույն ժամանակահատվածում փաստացի օգտագործվող տարածքը գերազանցել է սկզբնապես հատկացված 400 քմ մակերեսը որի նկատմամբ երկար տարիներ հաշվարկվել և վճարվել են գույքահարկի պարտավորությունները, և այս պահի դրությամբ պարտավորություններ չունեն:

Վ. Մելքոնյանը համայնքի ղեկավարից խնդրել է ընդունել որոշում՝ ՀՀ կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս բնակավայրում գտնվող՝ թիվ 07-008-0279-0076

կադաստրային ծածկագրով հողամասի 480 քմ մակերեսի նկատմամբ ճանաչել Վազգեն Եղիշի Մելքոնյանի սեփականությունը՝ անհատույց փոխանցման միջոցով, որից՝ 400 քմ-ը կազմում է սկզբնապես հատկացված հողամասը, իսկ 80 քմ-ը՝ կազմում է սկզբնապես հատկացված հողամասի նկատմամբ օրենքով թույլատրելի՝ մինչև 20 տոկոս մակերեսը: Իսկ նույն հողամասի 480 քմ մակերեսը գերազանցող և փաստացի օգտագործվող հողատարածքը՝ 310 քմ, Վ. Մելքոնյանին տրամադրել ուղղակի վաճառքի միջոցով: Ինչպես նաև հաստատել 15.06.2026 թվականի չափագրման արդյունքում 20.070.2026 թվականին կազմված՝ 790 քմ մակերեսով հողամասի հատակագիծը և ապահովել Չարենցավան համայնքի կողմից նախկինում՝ 14.10.2025 թվականին հաստատված և @ 2025BMG3YE «Հաշվառման տվյալների մուտքագրման վերաբերյալ» տեղեկանքով մուտքագրված՝ 23.09.2025 թվականին կազմված՝ 1152.7 քմ մակերեսով նույն հողամասի հատակագծի փոխարինումը սույն որոշմամբ հաստատվաշ՝ 15.06.2026 թվականի չափագրման արդյունքում 20.07.2026 թվականին կազմված՝ 790 քմ մակերեսով նոր հատակագծով:

Ուսումնասիրելով վարչական վարույթի շրջանակներում ձեռք բերված և գործում առկա փաստաթղթերը, վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած փաստարկները, ինչպես նաև իրականացված տեղազննության և մասնագիտական ուսումնասիրության արդյունքները՝ վարչական մարմինը պարզեց հետևյալը՝

Չարենցավանի քաղաքային խորհրդի գործկոմի 26.02.1993 թվականի թիվ 3 որոշմամբ հաշվառված 100 քաղաքացիներին հատկացվել են հողամասեր՝ յուրաքանչյուր ընտանիքի 400 քմ մակերեսով:

Նույն հողաբաշխման գործընթացի շրջանակում 14.04.1993 թվականի թիվ 6 նիստի արձանագրությամբ հաստատված բաշխման ցուցակի 50-րդ կետով Վազգեն Եղիշի Մելքոնյանը ներառված է անհատական բնակարանային շինարարության նպատակով իրականացված հողաբաշխման գործընթացում:

Հողամասը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս բնակավայրում:

Քաղաքացի Վազգեն Եղիշի Մելքոնյանն ավելի քան 30 տարի փաստացի օգտագործել է հողատարածքը և կատարել է օրենքով սահմանված հողի հարկի վճարումները:

15.06.2026թ. իրականացված չափագրման արդյունքում 20.07.2026 թվականին կազմված հողամասի հատակագծի համաձայն՝ 790 քմ մակերեսով հողամասից դիմումատուն հայցում է ձևակերպել սեփականության իրավունք հետևյալ համամասնությամբ՝ 400 քմ՝ օրինական հատկացված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչմամբ, 80 քմ՝ օրինական հատկացված մակերեսի 20 տոկոսի չափով՝ անհատույց տրամադրմամբ, 310 քմ՝ ուղղակի վաճառքի միջոցով:

Նշված 790 քմ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, իսկ 310 քմ հողամասը հանդիսանում է տվյալ գույքին հարակից տարածք, որն առանձին միավորով աճուրդային կարգով օտարվել չի կարող:

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթները, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերերի դրույթները և ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի 2026 թվականի սեպտեմբերի 08-ի վարչական վարույթի լսումների թիվ 17 արձանագրությունը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Վազգեն Եղիշի Մելքոնյանի դիմումը բավարարել:
2. Ճանաչել քաղաքացի Վազգեն Եղիշի Մելքոնյանի սեփականության իրավունքը 790 քմ հողամասի նկատմամբ:
3. Քաղաքացի Վազգեն Եղիշի Մելքոնյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրել սկզբնապես հատկացված հողամասի նկատմամբ օրենքով թույլատրելի, մինչև 20 տոկոսի չափով, 80 քմ մակերեսով տարածքը:
4. Քաղաքացի Վազգեն Եղիշի Մելքոնյանին ուղղակի վաճառքով օտարել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս բնակավայրում գտնվող N 07-008-0279-0076 կադաստրային ծածկագրով հողամասի 310 քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:
5. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս բնակավայրում գտնվող N 07-008-0279-0076 կադաստրային ծածկագրով հողամասի՝ 15.06.2026 թվականի չափագրման արդյունքում 20.07.2026 թվականին կազմված 790 քմ մակերեսով հողամասի հատակագիծը:
6. Ապահովել համայնքի ղեկավարի կողմից նախկինում հաստատված և մուտքագրված 1152.7 քմ մակերեսով նույն հողամասի հատակագծի փոխարինումը սույն որոշման 5-րդ կետով հաստատված՝ 15.06.2026 թվականի չափագրման արդյունքում 20.07.2026 թվականին կազմված 790 քմ մակերեսով նոր հատակագծով:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
8. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Չարենցավան համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 11
Ք.Չարենցավան